ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 2-ին, հինգշաբթի, հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պոզապալյանը մեկնեց Մոսկվա, ապրիլի 7-ին, Մաղկազարդի առթիվ, պատարագելու և Բանին կենաց քարոզությամբ մխիթարելու Մոսկվայի հայ հավատացյալներին։

* * *

Ապրիլի 7-ին, կիրակի, Մաղկազարդ։ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը։ Քարոզի բնաբանն էր «Ողորմեաց մեզ, Որդի Դաւթի»։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Երեկոյան ժամը 5-ին Մայր Տաճարում, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, տեղի ունեցավ «Դոնբացէք»-ի հանդիսավոր արարողությունը։

* * *

Ապրիլի 11-ին, Ավագ հինգշաբթի, «Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։

* * *

Ապրիլի 13-ին, Ավագ շաբաթ, «Ճրագալոյց Զատկի»։ Երեկոյան ժամերգության ընթացքում Հոգևոր Ճեմարանի ուսանողները ընթերցեցին Դանիելի գիրքը։ Այնուհետև Մայր Տաճարում Ճրագալույցի հանդիսավոր սուրբ պատարագը մատուցեց գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Ապրիլի 14-ին, կիրակի, «Զատիկ, յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ Ստեփանավանի Ս. Աստվածածին եկեղեցում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը, որը Մայր Աթոռից մեկնել էր այնտեղ պատարագելու և Բանին կենաց քարոզությամբ մխիթարելու հավատացյալներին։

* * *

Ապրիլի 15-ին, երկուշաբթի, «Յիշատակ մեռելոց»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պոզապալյանը։

Հավարտ սուրբ պատարագի, հոգեհանգստյան պաշտոն կատարվեց «վասն համայն ննջեցելոց ազգիս Հայոց»։

* * *

Ապրիլի 21-ին, «Նոր կիրակի», Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը «Տօնեսցուք ցնծութեամբ զնաւակատիս հոգւոց մերոց, նորոգեալ ի հնութենէ մեղաց» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Ապրիլի 23-ին, երկուշաբթի, Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ, Մայր Աթոռի միաբան բարեշնորհ Զոհրապ սարկավագ Շամլյանը, հաջողությամբ ավարտելով Հոգևոր Ճեմարանի լսարանական բաժինը 1961—1962 ուսումնական տարում, մեկնեց Բեյրութ, շարունակելու իր ուսումը Անգլիայում։

* * *

Ապրիլի 27-ին, ուրբաթ, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, երեկոյան ժամը 6-ին, Վեհարանում տեղի ունեցավ Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստը։

* * *

Ապրիլի 29-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։